



Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՕՍՈՒԱԾ Ս. ԳԱՅԱՆԷ
ՎԱՆՔՈՒՄ ՍՆՏՈՒՑՈՒԱԾ ԽԱՉՎԵՐԱՑԻ Ս. ՊՆՏԱՐԱԳԻՆ

(12 սեպտեմբեր, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Խաչ Քո եղիցի մեզ ապական»
Ժամագիրք:

Վեհափա՛ռ տէր, գերաշնորհ սրբազան եղբայրներ, հոգեշնորհ, արժա-
նապատիւ, բարեշնորհ հայրեր եւ շա՛տ սիրելի հաւատացեալ քոյրեր
եւ եղբայրներ ի Քրիստոս:

Այսօր Հայ Եկեղեցւոյ 5 տաղաւար տօներէն մէկն է՝ Խաչվերացի սքան-
չելի եւ խորհախորհուրդ յիշատակի օրն է: Ո՞րն է այս տօնին իմաստը:
Ինչո՞ւ մենք՝ քրիստոնեաներս, խաչն այսօրան երկիւղով եւ աստուածային
ջերմագին սիրով կը կրենք, կը համբուրենք եւ մեր առանձնակի աղօթք-
ներու ժամանակ շնորհ կը խնդրենք անորմէ: Քրիստոս իրապէս Իր խաչե-
լուծեամբ եւ Իր յարուծեամբ այդ փայտի եւ կենսատու նշանի մէջ կենդա-
նութիւն եւ շնորհ դրաւ: Վերափոխեց անոր ամբողջ իմաստը եւ դարձուց
յատուկ ճանապարհ՝ խաչի մի ճանապարհ, որ իւրաքանչիւր քրիստոնեայ
պարտաւոր է իշնալ, վեր կենալ, բայց Քրիստոս իրեն օրինակ ունենալով,
պաշքարիւ մինչեւ վերջ, մինչեւ լեռան գագաթը խաչը հասցնելու: Պատմա-
կան մասով պետք է ըսենք, որ 610 թուականին պարսկական զօրքի կողմէ
գողցուած խաչափայտը վերադարձուեցաւ եւ հաստատուեցաւ իր տեղը:
Այսպիսով՝ այդ ժամանակներէն ի վեր հայ ժողովուրդը այս նուիրական
իրադարձութիւնը կը տօնակատարէ: Պատմիչներու եւ Եկեղեցւոյ Սրբազան
Սեանդութեան միջոցով կը տեղեկանանք, որ խաչափայտի վերադարձման
ժամանակ թափօրն անցած է նաեւ հայոց աշխարհով՝ Տիրոջ ողորմածու-
թիւնն ու օրհնութիւնը պարգեւելով նաեւ մեր սուրբ հայրենիքին: Խաչը գե-
ղեցիկ կերպով մեկնաբանութիւնն է Յիսուս Քրիստոսի մարդ—Աստուած ըլ-
լալու կերպարին, այն կ'արտայայտէ Քրիստոսի կեանքի առեղծուածը:

Քրիստոս խոնարհութեան ամենամեծ Ուսուցիչն է, երբ ամէն անգամ բանանք Սուրբ Գիրքը եւ ընթերցելով հասնինք խաչելութեան դրուագին եւ մի պահ փորձենք պատկերացնել, թէ ի՞նչպէս կ'ապրէր մեր Տէրը, այդ պահուն պիտի սկսինք սիրել Անոր՝ ձուլուելով Անոր խոնարհութեան վառ կերպարին: Մենք կը կրենք քառաթեւ այդ մասունքը մկրտութեամբ: Կը դրոշմուինք խաչով: Վախի եւ ուրախութեան պահերուն կը խաչակնքուինք: Կեանքի ամէն դրուագ լի է խաչի խորհուրդով: Խաչը լրումն է Քրիստոսի երկրային կեանքի: Խաչը պաշտպանութիւնն է տեսանելի եւ անտեսանելի թշնամիին:

Երբ մուտք կը գործենք եկեղեցի, մի տեսակ կը փոխակերպուինք: Կարծէք՝ կը վերածնունդնք: Կը դառնանք աւելի խոնարհ եւ աղօթող: Ինչու, որովհետեւ այս աստուածաշունչ եկեղեցւոյ գլխավերելը կը կրէ խաչը, եւ այդ խաչի զօրութիւնն է, որ ուղղակի կերպով ներարկուած է ամէն մի քարի մէջ: Այդ խաչը մեզ կ'ստիպէ փորձել նմանուիլ լաւ քրիստոնեայի: Մեր տուներու, մեքենաներու եւ մեր պարանոցէն կախուած խաչն ուղղակի ուսուցողական պէտք է ըլլայ, եւ գերիշխէ խաղաղութիւնը: Ամէն դժուարութիւն պէտք է յաղթահարուի խաչելութեան խորհուրդով՝ յաբութեամբ: Մենք պէտք չէ խաչը կրենք միայն ցուցադրութեան համար: Անհրաժեշտ է խաչ կրել՝ վկայելով մեր քրիստոնեայ ըլլալուն: Երբ խաչ կը կրենք, պէտք է զգանք Քրիստոսի ներկայութիւնը մեր սիրտերուն եւ հոգիներուն մէջ: Մենք խաչ կը կրենք, որպէսզի մեր ներքին տաճարը մաքրուի եւ դառնայ Տէր Յիսուս Քրիստոսի բնակութեան վայրը:

Խաչելութեան պատմութիւնն իրօք ցաւոտ է, բայց այդ պատմութեան աւարտը՝ լուսապայծառ, որովհետեւ անոր զօրութիւնը փշրեց չարի ամէն կապանք, անոր զօրութիւնէն քանդուեցաւ դժոխքը: Այսօր Քրիստոսի չարչարանքի խորհուրդով հայ ժողովուրդը կը քալէ: Օրեր յետոյ պիտի լրանայ ամիսներ առաջ տեղի ունեցած ողբերգութեան, տառապանքի, ցաւի, արտասուքի մէկ տարին: Քրիստոսին օրինակ ունենալով՝ հայ զինուորներն անցան դառը ճանապարհներով, որով 2000 տարի առաջ մեր Տէրն անցած էր: Ինչպէս Տէրը կ'երթար դէպի Գողգոթա, անոր համար պարզ էր, որ իրեն պիտի խաչէին, դարձնելով ծաղր ու ծանակի միջոց, բայց Ան երբէք չհրաժարուեցաւ եւ մինչեւ վերջ երթալով եւ ձեռքերը տարածելով՝ խաչուեցաւ՝ իր գիրկն առնելով այս մեղաւոր եւ անարդար աշխարհը: Քրիստոսի կեանքի օրինակը վերցուցած՝ հայ զինուորները քալեցին դէպի ճակատամարտ, հայոց հազարաւոր մեր նահատակ տղաներն ուղղակի

մարտիրոսացան, անոնք չվախցան եւ չերկնչեցին: Թշնամիի գերզարգացած բանակի առաջ 18 տարեկան մեր տղաներն ուղղակի փայլեցան, եւ թշնամին անգամ մը եւս զգաց, թէ ով է հայ զինուորը, ով է վերջապէս հայը: Քրիստոսի խաչելութեան օրինակն ապրեցուց հայ զինականներուն:

Սիրելի՛ հայորդիներ, վստահ եմ գիտէք, որ այդ դժուարին օրերուն Արցախի անտառներուն մէջ մեր հոգեւորականները մկրտութիւններ կ'ընէին, շատ ու շատ չմկրտուած տղաներ կռիւէն առաջ կամ կռուի ընթացքին ցանկացան իրական քրիստոնեայ ըլլալ, ուզեցին դրոշմուած միւռնոնով մասնակցիլ այդ հերոսական կռիւներուն: Շատ ու շատ հոգեւորականներ խաչը ձեռքերնուն այս ու այն կողմ կը վազէին՝ փորձելով ոգեւորել մեր տղաներուն: Այդ հոգեւորականներէն մէկն է նաեւ մեր շատ սիրելի հայր Մկրտիչը՝ որմէ ցաւօք մինչեւ օրս տեղեկութիւն չունինք: Այսօր հայ ժողովուրդը կը վերապրի Քրիստոսի անցած կեանքը: Հայոց սահմանները խաղաղ չեն, խաղաղ չենք նաեւ մենք: Պատերազմն աւարտուեցաւ, բայց մենք ցաւօք դեռ կ'սպասենք խաղաղութեան այցին: Այսօր մեր նահատակ զինուորներուն ծնողները կ'ապրին այն ամէնը, ինչը ժամանակ առաջ ապրեցան բոլորիս մայրը՝ Մարիամ Աստուածածինը, եւ Յովսէփ Աստուածահայրը: Չմոռնանք եւ ամէն օգտակար գործերով հաղորդակից ըլլանք՝ ապրելու եւ գործելու յոյսը ներշնչելով անոնց սիրտերուն մէջ: Մենք ընելիքներ ունինք, մեր սխալները վերջին արհաւիրքներէն յետոյ աւելի ակներեւ դարձան: Մենք պէտք է քալենք խաչի այս շորս ուղիներով՝ հաւատքի, յոյսի, հայրենասիրութեան եւ իրար սիրելու ճանապարհներով: Ինչպէս խաչի խորհուրդը կը բացայայտուի Քրիստոսով, այնպէս ալ Քրիստոս կը բացայայտուի, երբ կը սիրես դիմացինդ:

Արդ, սիրելի՛ հաւատացեալներ, կը մաղթեմ, որ Տէրունական Սուրբ Խաչն ամուր վահան ըլլայ բոլորիս: Թող այն որպէս յաւերժ յիշատակութիւն մշտամնայ արտայայտէ մեր սիրտերուն մէջ այն անգին սիրոյ մասին, որ Աստուած ցուցաբերեց բոլորիս համար՝ խոնարհութեամբ ընդունելով իրեն հասցէագրուած տառապանքները: Թող Յիսուս Քրիստոսի արեամբ ներկուած այդ քառաթեւ մասունքը յարատեւ լուսաւորէ եւ ուղենիշը ըլլայ գալիք դժուարութիւններու եւ գալիք յաջողութիւններու համար: Թող Խաչը պաշտպանէ եւ պահպանէ մեր զինուորներուն: Թող այլեւս ոչ մի լաց ու արտասուք չտեսնենք մեր ազգի աչքերէն:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն մեզ բոլորիս այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն: